

հոյակապ էջը՝ առաջինը 1902ի *Ծաղիկ*ին եւ երկրորդը 1911ի *Բագին*ին մէջ հրատարակուած:

Ռուբէն Զարդարեան թէ իր ոտանաւոր եւ թէ արձակ բանաստեղծութեանց մէջ քնարերգական շունչ մը ունի, այս բառին լայն իմաստովը, թէեւ իր գրույթինները կարելի է երեք որոշ մասերու բաժնել,– *հէքեաթները, բանաստեղծութիւնները, եւ բարբերու արտայայտութիւնները*,– սակայն ամէնքն ալ ոգեւորուած են այն հզօր եւ բանաստեղծական շունչով որով ներկայացուած եղելութեան կամ անձին հոգին զգալի եւ իմանալի կը դառնայ եւ կը դադրի առարկայական ներկայացում մը ըլլալէ: *Սեւ հավը կանչեց, Վախ եւ մեռնէի, Շուն մըն ալ պակաս, Տան սէրը* ըլլալով հանդերձ գաւառի բարբերու յստակ պատկերներ, դուրս կ'ելլեն իրենց շրջանակներէն, անոնց ներշնչուած կեանքը կը թելաւորուի, անսահմանօրէն կ'երկարաձգուի, կ'ստանայ երաժշտութեան եւ բանաստեղծութեան թելադրիչ տարտամութիւնը եւ դադրելով ըլլալէ այս ինչ մարդուն կամ այն ինչ դէպքին հոգեկան մեկին նկարագրութիւնը կ'ըլլայ մարդուն եւ դէպքերուն անսահմանելի արտայայտութիւնը:

Բայց իր տաղանդը իր բարձրագոյն արժէքին կը հասնի իր բանաստեղծութեանց եւ մանաւանդ իր հէքեաթներուն մէջ որով անիկա մեզի կը ներկայանայ իբր ամէնէն անխարդախ եւ ինքնուրոյն *խորհրդանշանական* բանաստեղծը: Այս բառը քիչ մը չարաչար գործածուած ըլլալով մեր մէջ չպիտի ուզէի սխալ կարծիք մը ներշնչել: Զարդարեան խորհրդանշանական գրող մը չէ ինչպէս Մալարմէ, Սթուար Միլ, Ռընէ Կիլ, Մէթելիինկ եւ ուրիշներ. անիկա իր արուեստագիտական նուրբ բնագոյր ունի իբր ներշնչման աղբիւր եւ եթէ այդ բնագոյր իրեն կարելի դարձուցած է որ անիկա վայելէ եւրոպական գրականութեան հոսանքներուն արդիւնքները, ոչ մէկ կերպով չէ քալած անոնց օտար հետքերուն վրայէն: Իր հէքեաթները, ծնած բնաշխարհի ծոցէն, կը համադրեն իրենց մէջ բարոյական կարգէ հոսանքներու, ընդդիմամարտութեանց կամ դաշնակցութեանց աշխարհներ. անոնց ներշնչման աղբիւրը